

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ս. ՂԱԶԱՐԻ ՄԵԾ ՏԱՐԵԴԱՐԶԸ	186
Հ. Ն. Տ. Ն. - Սուրբ Ղազարի 250ամեայ յո- րելեանի բացման հանդէսը (վեցետիկ, Ս. Ղազար, 8 Սեպտ. 1967)	190
ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ Հ. Ն. - Հայոց կղզիին 250- ամեակը. 1717-1967 (Շաբ. 4)	193

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ. - Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի (Շաբ. 13)	197
---	-----

ԼԵԶՈՒԱԿԱՆ

ՄԵԽԻԹԱՐԵԱՆ ՅԱԿՈԲ Մ. - Աբրահայր Մի- քայր Սեբաստացու շարահիւսական ըմ- բռնումները (Շաբ. 2)	206
---	-----

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՏՈՆԵԱՆ Հ. ՌԱՓԱԵԼ. - Իմաստասիրա- կան տարրեր՝ հայ վերածնունդի պատ- մութեան մէջ (Շաբ. 1)	210
---	-----

ԳՐԱԿԱՆ

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ Հ. Ն. - Շէյքսպիր եւ Հ. Գ. Զարբհանալեան	216
ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Երազմերու կղզին - Ա. Եղիցի	230
Բ. Անաղմուկ Բայր	233
Գ. Առաւուտ լուսոյ	234

ԿՐՕՆԱԿԱՆ

ԶԷԿԻԱՆ Հ. ԼԵՈՆ. - Վատիկանեան Բ. Ժողովի հետեւերով - Արդի քաղաքակրթ- ութիւնը եւ եկեղեցին (Շաբ. 3)	221
ՅՈՒՅԱԿ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԲԵՐՈՒ	235-236

ARTICLE DE FOND

***. — Le grand anniversaire de St. La- zare	186
P. N. D. N. — Première célébration du 250ème anniversaire de St. Lazare (Venise, St. Lazare, le 8 Sept. 1967)	190
DER-NERSESSIAN P. N. — Le 250ème an- niversaire de l'île des Arméniens: 1717- 1967 (Suite)	193

PHILOLOGIE

ANANIAN P. PAUL. — La vie de St. Mes- rop (Suite)	197
--	-----

LINGUISTIQUE

MEKHITHARIAN HAKOB M. — Les idées syntaxiques de l'Abbé Mekhithar de Sébastie (Suite)	206
---	-----

PHILOSOPHIE

ANDONIAN P. RAPHAEL. — Eléments phi- losophiques dans l'histoire de la re- naissance arménienne (A suivre)	210
--	-----

LITTÉRATURE

DER-NERSESSIAN P. N. — Shakespeare et P. G. Zarbhanalian	216
HOVHANNESIAN P. VAHAN. — L'île des songes: I. - Fiat	230
II. - Des pas silencieux	233
III. - Le matin	234

RELIGION

ZEKIYAN P. LEON. — A la lumière du Va- tican II ^e - La civilisation moderne et l'Eglise (Suite)	221
--	-----

INDEX DES LIVRES REÇUS	235-236
----------------------------------	---------



1843 - 1967
ՃԻԵ. ՏԱՐԻ

ԹԻԻ 9 - 10
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԲԱԶՄԱՎԵՅ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXV^o année, 1967, N. 9 - 10 Septembre - Octobre

Ս. ՂԱԶԱՐԻ ՄԵԾ ՏԱՐԵԴԱՐԶԸ

Ս. Ղազարու 250ամեակի տօնակատարութիւններու
բացման հանդէսին կատարուած պաշտօնական ու-
ղերձ, Միաբանութեան Ընդհ. Աբրահայր Գրպժ.
Հմայեակ վարդ. Կեօկեանի կողմէ (8 Սեպտ.
1967):

Երախտագիտութեան խորունկ զգացումներով օծուն, մեր Ե-
րանաշնորհ Հիմնադրին ձեռնադրուած աշխարհի տակ
հաւաքուած եմք այսօր, որդիական շնորհակալութեան խոնարհ ու
սրտաբուխ երգ մը հնչեցնելու՝ ի պատիւ Սուրբ Աստուածամօր, իր
հրաշալի Ծննդեան տօնին առիթով, Միսիրար Աբրահայր եւ անոր ա-
ռաջին աշակերտներուն՝ Ս. Ղազար կղզին մտնելու 250ամեայ տա-
րեդարձի սեմին:

Իրապէս մեծ յուզումով կու գանք խանդավառօրէն ոգեկոչե-
լու այն պահը՝ զոր ապրեցան մեր Նախնիք, երբ՝ երկարամեայ ա-
լիքովեալ քափառումներէ, գրկանքներէ ու տառապանքներէ ետք՝
անոնք ոտք դրին այս օրհնեալ կղզին, 1717 քուականի Սեպտեմբերի
Տին, եւ անոր խաբխուր եկեղեցւոյն խորանին առջեւ՝ իրենց սիրտը
եւ ուխտը մատուցին Սուրբ Աստուածամօր:

Այն օրէն սկիզբ առաւ պատմութիւնը Հայոց կղզիին, եւ բո-
րոտներու հին անկեղանոցին մէջ՝ հիմերը դրուեցան հայ վերանորոգ
վանականութեան, հոգեւոր ներանձնութեան դարբնոցի մը վերածե-
լով՝ երբեմնի զինարանը վեցետիկեան հօր տորմիղներուն:

Նախնականութեան առաջնորդութեամբ, Արեւելէն եկած
խումբ մը վանականներ՝ Սեւանի Աստուածամօր ժպիտը ցանցին այս
ամայի կղզեակին վրայ, գայն դարձնելու համար սրբութեան եւ լու-
սաւորութեան որրան մը, Ադրիականի խաղաղ եւ հիւրընկալ ա-
փունքին:

Եւ Ս. Ղազար շէնցաւ, զարդարուեցաւ, տարիներուն եւ դա-

բերուն հետ՝ մեծցաւ, պարսպապատ ամրոց ու կազմակերպեալ վանքի դարձաւ, վեներաբլի լեակին գոհար կղզին կոչուեցաւ:

Ի՞նչ բեղմնաւոր աշխատանք...: Եկեղեցին՝ ուր այս առաւօտ մատուցինք հանդիսապէս մեր գոհարանական սուրբ պատարագը, այս գեղակերտ գրադարանը՝ որ մասունքն իսկ է մեր Երանաշնորհ Հիմնադրին, վկաներն են այդ 250ամեայ ժիր եւ անխնայ աշխատանքին ու նուիրումին:

Մեր վանքի ամէն մէկ անկիւնը, իր շնորհալի կամարակապներով ու խորհրդաւոր սրահներով, իր լուսազուարթ ընծայարանով ու մշտանդին մամուլներով, իր հագարամեայ մագաղաքներով, իր սլացիկ նոնիներով ու խնկարոյր շիրիմներով, մեզի անդադար կը փոխանցէ գործօն ոգին մեր լուսեւրամ Հայրերուն, մեծն Մխիթարի շունչով քաթաւուն:

Արտասահմանի անցեալի ու ներկայի մեր առաքելութիւնները եւ վարժարանները, որոնք դալար ոստերն են Ս. Ղազարի կենսունակ ոգիին, Հայութեան հեռաւոր եւ ցիրուցան գաղութներուն մէջ ծլարձակուած, եւ յանալս անոնց բախտին կամ աղէտին վիճակակից, մեր վանքի դարաւոր պատմութեան խօսուն վկաներն են:

350 վանականներ, Մխիթար Աբբաօր օրերէն, կեանք են առած այս խոնարհ կղզեակէն, եւ սնած սրբութեան եւ գիտութեան օծումով, աշխատած են կրօնական եւ հոգեւոր լուսաւորութեան, ինչպէս նաեւ մշակոյթի ջանք արծարծել՝ հայ իրականութեան մէջ:

Բայց յիշատակը, զոր կու գանգ տօնախմբել այսօր, պիտի չուզէինք որ մեզ մղէր համադրելու լոկ պատմութիւնը Մխիթարեան 250ամեայ գործունէութեան, մտովի արշաւելով կրօնական ու մշակութային բազմազան մարգերու ընդմէջէն, ոգեկոչելով դէպքեր ու դէմքեր, իսկական պարծանքները մեր ժողովուրդին, Մխիթարէն Ալիշան, որոնց անունները օրհնութեամբ կը յիշատակենք յաւերժօրէն:

Մեր օրերուն, եւ մանաւանդ վերջին երեսնամեակի ընթացքին, զանազան դարադարձներ՝ առիթ են տուած այդ հարցերու մասին երկարօրէն ծանրանալու, մամուլով եւ այլ հանդէսներու կազմակերպութեամբ, հոս, հայրենիքի եւ բովանդակ սփիւռքի մէջ:

Ներկայ նշանակալից տարեդարձն ալ, լաւագոյն պատեհութիւնը պիտի ընծայէ, անշուշտ առանց կրկնելու նախորդները, յատկապէս ու մտերմօրէն խօսելու մեր սերունդին ու մեր ժամանակին հետ:

* * *

Կանգնած այժմ այս նոր յորելեանի բարձունքին, իբրեւ բազմամեայ տաժանագին վերելք մը ետք, Մեծարգոյ Հայրեր ու Պատուական Եղբայրներ, մենք պիտի բաղձայինք հիւսել պատմութիւնը ուրիշ իրականութեան մը, որ հոգեկան լիսեռը կը կազմէ մեր երկուհուկէս դարու հոլովոյթին, եւ իր շնորհագեղ աւիշով կը բեղմնաւորէ անոր ընթացքը, պատմական այլազան իրադարձութիւններու ընդմէջէն:

Գերբնական այդ իրականութիւնը, որ, ինչպէս ըսինք, ողնա-

յարը կը կազմէ մեր Միաբանութեան կեանքին, որով կը յորդին մեր վանքի յուշամատենին բոլոր էջերը, Սուրբ Աստուածամօր Երկնապարգեւ շնորհներու տեւական եւ ազդու ներկայութիւնն է մեր մէջ, անոր մայրենի եւ հօգօր պաշտպանութիւնն է մեր վանքին վրայ. գերբնական իրականութիւն, զոր պարտական ենք յուզումով եւ որդիաբար վերակոչել, երախտագիտութեան այս տօնին առիթով:

Արդարեւ, Աստուածամօր շնորհներուն ծաղիկն է այս վանքը, իր բովանդակ կեանքով ու գործունէութեամբ:

Ժէ. դարու վերջին տարիներուն, վերածնունդի հսկայ ճիգեր կը քափուէին մեր աշխարհին մէջ, եւ փրկագործութեան նորօրինակ խորհուրդ մը կը կրկնուէր Արարատի ստորոտը: Մխիթար Աբբա-խորհուրդ մը կը կրկնուէր Արարատի ստորոտը: Մխիթար Աբբա-խորհուրդ մը կը կրկնուէր Արարատի ստորոտը: Մխիթար Աբբա-խորհուրդ մը կը կրկնուէր Արարատի ստորոտը:

Ու Տիրամայրը կը յայտնուէր հոն, իբր գորացուցիչ հրեշտակ, մեր հոգեւոր լուսաւորութեան ապագայ առաքելին՝ պատանի Մխիթարի հոգին սրտապնդելու:

Աստուածամօր գերազանցօրէն ջերմեանդ ժողովուրդի մը փրկութիւնն ու վերածնունդը կրնա՞ր միթէ այլապէս տեղի ունենալ:

Սեւանի խորհրդաւոր տեղիքը, հեռաւոր մամուլեամբ մը արդեօք մեզի չի՞ յիշեցներ Ձիթենեաց պարտէզի տեսարանը, ուր Մխիթար, ահաբկու սրտաքելութիւններէ ետք, քախանդակն աղօթքով կը յանձնուէր երկնաւոր Մօր կամքին:

Աստուածամօր ազդու ներկայութիւնը այդ պահէն կը սկսի մեր վանքի պատմութեան մէջ. ու փոխադարձ՝ որդիական յանձնում, Մխիթարի կողմէ, յանձնում՝ բոլորանուէր, յանձնում՝ անվերապահ:

Մխիթարի այդ յանձնումը կը դառնայ նաեւ կնիք նուիրական, որով մենք, Մխիթարի հետեւորդներս, մասնայատուկ տիտղոսով, Աստուածամօր որդեգիրներ կը կոչուինք, մեր հիմնարկութեան առաջին օրէն իսկ:

Մկրտութեամբ՝ բոլոր քրիստոնեաներն ալ որդեգիրներ են Ս. Աստուածամօր, որ Մայրն է նաեւ խորհրդական Մարմինն Քրիստոսի, ու մենք՝ եղբայրակից ենք Քրիստոսի եւ ժառանգակից երկնքի:

Կրօնաւորական ուխտադրութեամբ, Մխիթարի հետեւորդներս, մասնայատուկ որդեգիրներն ենք Ս. Կուսին, որ Աստուծմէ տրուեցաւ Մայր ու Առաջնորդ՝ Մխիթարեան Միաբանութեան ապագայ Հիմնադրին:

Այս որդեգրութեամբ, կրկնակի, կարծէք, եղբայրակից կ'ըլլանք Քրիստոսի. կամ՝ այլ բառերով, աւելի եւս կը խորանայ մեր եղբայրակցութիւնը ի Քրիստոս, եւ աստուածապարգեւ նոր օղակով մը կ'ամրապնդուի:

Իսկ որդեգրութեան յատկանիշները, զոր բունեցիմք վերեւ, կը դառնան տարբեր Մխիթարեանի նկարագրին. տարբեր՝ որոնք կ'անցնին լոկ որդիական ջերմեանդութեան մը սահմաններէն, կը դառնան խորունկ եւ իսկական ապրում, Մխիթարեան հոգեւորականութեան էութիւնը կազմող. սրարշաւ վազ մը ձգտում դէպի լուսաւորութիւն, Ս. Աստուածամօր ազդու միջամտութեամբ, որդեգրական նուիրումով, ապաշխարութեան վարդապետի տարագով եւ առաքելական հոգիով:

2170-67



Տեսիլքէն ետք, Մխիթարի կեանքը համակ նուիրում եղաւ Աստուածամօր, նուիրում իր ազգին լուսաւորութեան:

Առաջին կենսագրին համաձայն, Մխիթար Աբբահայր՝ ամբողջ կեանքին ընթացքին՝ երբեք իր աչքէն չէր հեռացուցած Աստուածամօր չճանաչող պատկերը ու կ'ապրէր անոր խորհուրդով:

Մխիթար կուրացած՝ Աստուածամայրը կը փնտռէ, Մխիթար ակեղծեալ՝ Տիրամայրը կը փառաբանէ տաղերով, Մխիթար հալածական՝ Տիրամօր գիրկը կ'ապաւինի, Մխիթար մահամերձ՝ Տիրամօր սուրբ լոյսը կը տեսնէ:

Իսկ Տունը՝ զոր շինեց, ինքն իսկ կոչեց Տուն Աստուածամօր, եւ հռչակեց Տիրամայրը՝ իբր իսկական հիմնադիր. իր առաջին աշակերտները, մեր ծերունագարդ Հայրերը, Աստուածամօր ծառաներու, Աստուածամօր որդեգիրներու ապաստանարան կ'անուանէին Ս. Ղազարը, ուր տեւականօրէն ներկայ է Աստուածամայրը եւ յաւերժօրէն կը հսկէ մեր վրայ: Ահա այն գերբնական իրականութիւնը, որ լիսեռն է մեր պատմութեան:

Ու մենք ջերմօրէն կը հաւատանք ասոր, մենք վկաներն իսկ ենք ասոր. եւ փոխադարձաբար՝ մեր կեանքն ինքնին, ասոր վկայութիւնը պէտք է ըլլայ:

Գերբնական այս իրականութեան դիմաց, պատմական լոկ գուգադիպում չի կրնար նկատուիլ այն՝ քէ Միաբանութիւնը Սեպտեմբեր Տի Աստուածամօր մեծ տօնին օրով հիմնուած է Պոլիս, կամ քէ նոյն տօնին՝ տխուր հալածանքներէ նոյնպէս՝ Միաբանութիւնը փոխադրուած է Մեքոն, կամ քէ դարձեալ նոյն տօնին՝ Օսմանեան սմբակներէն հալածական՝ մտած է Ս. Ղազար. կամ քէ հուսկ նոյն տօնին, հրաշքով ազատած է Նափուլէոն Պոնափարքի՝ վանքերու բռնագրաւումի ահարկու վնիւնէն:

Ու կ'երկարի ոսկեղէն շրջան Ս. Աստուածամօր շնորհաբեր այցելութիւններուն, 1848ի վենետիկի անկախութեան պայքարներու օրերէն մինչեւ Խալիլոյ միութեան շրջանը, եւ անկէ ետք՝ մինչեւ մեր օրերը, շունդալից պատերազմներու, դարդալից արհաւիրքներու կամ երկրային տարբերու սպառնազին յորձանքներուն ընդմէջէն. չքուելու համար վանքի ժամանակագրութեան այլ դժբախտ տարիները՝ հալածանքները, տնտեսական տագնապները, եւ այլն...:

Ու Մխիթարի որդիները, շատ հին ժամանակներէ սկսած, հանդիսաւորութեամբ ու գոհաբանական այլ աղօթքներով ուզած են մասնաւոր փայլ մը տալ Աստուածամօր բոլոր տօներուն առ հասարակ, յատկապէս Ծնունդին, ստեղծելով նաեւ առանձին տօն մը՝ Աստուածամօր Պաշտպանութեան, ընծայելով Ս. Կուսին Պահպանիչ Որդեգրաց սիրուն տիտղոսը:

Պահպանիչ Որդեգրաց... Ի՞նչ խորհուրդներ կը յայտնէ մեր սրտին այս գողտրիկ ու խորիմաստ տիտղոսը. ի՞նչքան երկնային շնորհագարդ ժպիտներ է բաժնած մեզի Տիրամայրը, եւ գուրգուրոտ ի՞նչ խնամքներ է ցոյց տուած նաեւ ամէն մէկ որդեգրի հոգեկան ներքին պատմութեան ու կազմաւորումի ընթացքին:

Տօնն է, ուրեմն, այսօր, ամէնէն առաջ, Ս. Աստուածամօր

250ամեայ խնամակալութեան. յաղթանակի տօնն է Աստուածամօր հօր պաշտպանութեան, մայրենի հոգածութեան ու սիրոյն:

Շնորհակալութեան ու երախտագիտութեան խորունկ զգացումներ քող ժայթքին այսօր՝ խոնարհ սրտերէն իր որդեգիրներուն, որոնք իրենց գոյութիւնն ու գործունէութիւնը համակ կը պարտին Ս. Աստուածամօր անսպառ շնորհներուն, տեւական ներշնչումներուն, մշտնջենաւոր ներկայութեան:

Շնորհակալութեան հետ, մեր անդրանիկ ու ջերմագին մաղթանքն է որ ծաղկի մեր իւրաքանչիւրիս հոգիներուն մէջ՝ որդեգրական այն շնորհքն ու նուիրումը, որ հարազատ հայեւացումն է Մխիթար Աբբահօր հոգիին. միայն այդպէս մենք պիտի կարենանք ընթանալ այն լուսաւոր ուղիէն, զոր բացած է մեր առջեւ ինք երկնաւոր Մայրը:

Գերբնական այս իրականութիւնները քող իրենց դրոշմը քողուն մեր բոլոր գործերուն վրայ, վանական կամ առաքելական, կրթական կամ մշակութային, գրական կամ հրատարակչական մարզերուն մէջ:

Սուրբ Աստուածամօր Տունը՝ սիրոյ, խաղաղութեան, համերաշխութեան եւ վանական քաղցրութեամբ ջերմացած տուն մըն է. որուն բնակիչները գերագոյն նպատակ մը ունին. աստուածային լոյսով ողորդուած՝ սիրոյ եւ միութեան հուրը ծաւալել հայ ժողովուրդին մէջ, որ այնքան կարօտն ունի անոնց:

Աստուածամօր օրհնութիւնն, ուրեմն, անպակաս ըլլայ այս նուիրական յարկին վրայէն, ծաղկի՝ անիկա նորանոր աստուածանուէր սերունդներով, վեհանձն նուիրեալներով, որոնք պատանի Մխիթարին նման, քողած հայրենի տուն ու երդիք, Աստուածամօր տան մէջ գտնեն ամէն շնորհք ու բարիք:

Եւ մեզի բոլորիս, որ ներկայ պահակներն ենք այս Տան, պարգեւէ անսպառ կորով, յարատեւելու մեր նուիրումին մէջ, եւ գոհուելու ի սպաս Աստուածամօր Տան պայծառութեան եւ յաւերժ հաստատութեան:

Այս նուիրական պահուս, վստահ ենք քէ մեզի միացած են, մեր երանաշնորհ Հիմնադրին հետ, մեր բոլոր վաստակաւոր Հայրերը, ու երկնիէն կը հետեւին մեր քայլերուն, կը ձայնակցին մեր գործերուն, հաբանական աղօթքներուն, կը հրնուին մեր վանքին օրէ օր ծաղկումով ու գեղազարդումով, կրօնական ու մշակութային յառաջադիմութիւններով:

Տիրամօր օրհնութեամբ սկսած այս գործը, քող յաւերժ շարունակուի անոր անոյշ հովանիին տակ, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ, ի հոգեւոր մխիթարութիւն եւ լուսաւորութիւն Հայ Ազգի:

Հանդիսական այս յուզումնալից պահուն, որդիական զգացումներով, յանձնուինք բոլորս միասին անգամ մըն ալ մեր երկնաւոր Պաշտպանին, գոչելով միաբերան մեր ծիսարանի աղօթքին հետ.

«Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ Կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատն՝ գաղաչանս մեր որդւոյ քոյ եւ Աստուծոյ մերոյ, փրկել գնեց ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց»: